

ՀԱՅԱԿԱԿԱՆ ՎԱՆԻՔԵՐ

ԽԱՐԱԲԱՍԱՅ ՎԱՆՔ

ՊՈՏՄՈՒԿԱՆ. — Խառարաստայ Վանքը կը գանուէր Քաջրերունեաց կամ Արձէշի գաւառին մէջ, Ականց աւանին հիւսիս արևելեան կողմը, Խառարաստ աւանին ոչ հեռու։ Նախապէս կը կոչուէր Առևխարայ Վանք, կամ Արծուաբեր Ս. Աստուածածին։ Ունէր հայակապ և պայծառաշչն եղեղեցի, կառուցուած յանուն Ս. Աստուածածնի։ Վանքը իր ամենէն ծագկաւ չըջանը բոլորած է ԺԵ. գարուն։ Յիշեալ գաւառին եպիսկոպոսը կը նատէր Խառարաստայ Վանքը և կը նկատուէր նաև Վանքին առաջնորդը։ Մանօթ անունները մեծ թիւ մը չեն կազմեր։ — Փիրզաէմեան, Նօտարք, էջ 2, 49, 174։

Ա. — Ղազար Առաջնորդ, 1325. — Սրուանձտեանց, Թ. Աղբար, Բ., էջ 332։
Բ. — Խաչատուր Եպիսկոպոս, 1380?—
Թ. Մեծոփեցի, էջ 37։

Գ. — Զամեն Եպիսկոպոս, 1389–1400. — Թ. Մեծոփեցի Պատմութիւն, էջ 35–7. Յիշատակարան, էջ 54։ Նօտարք, էջ 11, 49–50։ Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 629։

Իր ցուցմունքով, 1389ին, Սարգիս Վարդ. Սորբեցի կամ Ապրակունեցի, Խառարաստայ Վանքին մէջ հաստատեց Դըպրեցանք մը, ուր ժողովուեցան աւելի քան 60 կարգաւորներ և ուսումնականներ, ուրոնք հետեւեցան իր գասախօսութեանց մինչև իր մահը (1401). — Ազգապատում, յօդ. 1368, 1380։

Ապրակունեցիի մահէն եաք իր աշակերտներէն խումբ մը, 12 հոգի, զացին Տաթեացիի մօտ իրենց ուսումը շարունակելու։ Սարգիսի ուսումնասէր այդ սաներն էին, այբուբենի կարգով։

1. — Թովմայ Վարդ. Մեծոփեցի, Պարունապետ և առաջնորդ Մեծոփայ Վանուց (1411–† 46)։

2. — Կարապետ Վարդ., առաջնորդ Խառարաստայ Վանուց (Դ.)։

3. — Ղազար Վարդ. Աղթամարցի, 1410. — Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 105։

4. — Մարգարէ Վարդ. Վարագեցի, Պարունապետ և առաջնորդ Վարագայ Վանքի (1418–48)։

5. — Մելքիսեդեկ Վարդ. Բներկրցի, առաջնորդ Յուսկան Արգւոյ Վանքի (1414–1420)։

6. — Մկրտիչ Վարդ. Հողձեցի, 1409–10. — Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 94, 105։

7. — Մկրտիչ Վարդ. Նահապետենց, Վանահայր Մեծոփայ Վանուց (1435–45)։

8. — Մկրտիչ Վարդ. Օրբէլենց, Բներկրցի, Վանահայր Յուսկան Արգւոյ Վանքի (1418–39)։

9. — Յակոբ Վարդ. Ովսաննացի, Նշարունապետ, † 1428. — Թովմայ Մեծոփեցի, էջ 43։

10. — Յովհաննէս Վարդ. Բաղիշեցի. — Թ. Մեծոփեցի, էջ 52. — Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 105։

11. — Յովհաննէս Վարդ. Փափէնցի. — Թ. Մեծոփեցի, էջ 52. — Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 105։

12. — Սարգիս Վարդ. Մեծոփեցի, որդի Մարտիրոսի և Թամթայի, 1401–50. — Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 6, 94, 105, 650։

Գ. — Կարապետ Վարդապետ, 1401?–58, որդի Մարգարէի, եղբօրորդի Զաքէսս եպիսկոպոսի, մօրեղբայր Ստեփանոս եպիսկոպոսի; Երաւուղէմ ուստի եկած է 1416ին։ — Նօտարք, էջ 20, 31, 49, 77, 153, 160, 174–5. Սիւրմէկեան, Յուցակ Զեռ. Եւր. Մանաւորաց, Թ. 1, էջ 3։ Խաչիկեան, Յիշտ. Դարի, Ա., էջ 212, 549, 654։

Իր Վանահայրութեան սկիզբի տարիներուն, Սարգիս Սորբեցիի մահէն ետք, չորստարի, 1401–5, զարեցանուց բարունապետի պաշտօնը վարեց Վարդան Վարդ. Հոգոցեցի, Էլնկթիմուրի արշաւանքին պատճառով ապաստանեցաւ Սալնապատ և հոնվախճանեցաւ յաջորդ տարին (1406). — Թ. Մեծոփեցի, էջ 37, 49. Նօտարք, էջ 11–2. Զարբհանէկեան, Պատմ. Հայ. Դըպրութեան, Բ., 1905, էջ 152–3. Ազգապատում, յօդ. 1381։

Ե. — Յավիաննէս Արքեպիսկոպոս, 1466–73. — Ոսկեան, Բ., էջ 409. Խաչիկեան,

ԺԵ. Դարի Յիշտ., Մասն Բ., էջ 322 և 344:
Իր ըրջանին իրքեւ միաբաններ յիշուած
են, Տէր Յովանէս հերպետ, Տէր Սլոմէսն
փակակալ, Տէր Գրիգոր, Տէր Ներսէս, Տէր
Յովուչի, Տէր Իգնատիոս, Տէր Ստեփան-
նոս, Տէր Զաքէսո, Տէր Կարապետ, Տէր
Յովաննէս և Տէր Մկրտիչ. — Խաչիկեան,
էջ 344:

Զ. — Ստեփանոս Խպիսկոպոս, 1513-
34. — Առկեան, Վասպուրականի Վանքերը,
Բ., էջ 409, 410:

Ե. — Մինաս Խպիսկոպոս, 1578-85.
— Հանդ. Ամս., 1925, էջ 471-2: Արժ-
բառեան, Գեղարքունիք, էջ 49:

ՄՇԱԿՈՒԹԱՑՑԻՆ. — Խառարաստայ
Վանքը որոշ չափով ունեցած է նաև զըր-
չագրական արդիւնաբութիւն: Մանօթ են
հետեւալ գրիչները.

Ա. — Արգիս Կրօնաւոր, աշակերտ
Յովուչի Վարդապետի. 1325ին օրինակած
է մէկ Գիրք ԺԵ. Մարգարեից եւ Յովայ. —
Թ. Աղբար, Բ., էջ 331-2:

Բ. — Միխթար Գրիչ, որդի Զօպանի և
Թաճխաթունի, աշակերտ Գրիգոր Վարդա-
պետի. 1393ին օրինակած է մէկ Մելինու-
թիւն Հնգամատենի, Վարդան Վարդապետի.
— Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, էջ 606:

Գ. — Գրիգոր Վարդապետ, Գրիչ, 1391
-1414, Խառարաստայ Վանքին մէջ օրի-
նակած է.

1. — Անկեփորիկ, 1391ին, ի վայե-
լումն առաջնորդ Տէր Զաքէսոփ. — Առկ-
եան, Բ., էջ 400:

2. — Փողովածու, 1400-1413ին. —
Յովուչիկեան, Յիշտ. Զեռ., էջ 521:

3. — Գիրք Հարցմանց, Գր. Տաթեա-
ցիի, 1413ին. — Խաչիկեան, Յիշտ. ԺԵ.
Դարի, Ա., էջ 144:

Դ. — Գրիգոր Խլաթեցի, Մերենց, Նշ.
Գրիչ, 1400ին, Առևսարայ Վանքին մէջ օ-
րինակած է մէկ Մելինութիւն Կարուղիկեայց,
Մարգիս Վարդապետի, Ստեփանոս արե-
ղայի ցանկութեամբ. — Խաչիկեան, Յիշտ.
ԺԵ. Դարի, էջ 627-9:

Ե. — Ներսէս Պատանի, Զարդանկա-
րիչ, 1400-1413, եղբայր Վարդետ Յովու-
չիսի:

1. — Խորան մը նկարած է, 1400ին,

Գր. Խլաթեցիի օրինակած Կաթողիկէ Թըր-
թոց Մեկնութեան մէջ. — Խաչիկեան, Յիշտ.
ԺԵ. Դարի, էջ 629:

2. — Զարդագրած է 1400-1413ին
Գրիգոր զրչի օրինակած Ժողովածուն. —
Յովուչիկեան, Յիշտ. Զեռ., էջ 521:

Զ. — Յովինաննէս Քահանայ, Գրիչ,
1413ին օրինակած է մէկ Գիրք Հարցմանց,
Գր. Տաթեացիի. — Խաչիկեան, Յիշտ.
ԺԵ. Դարի, Ա., էջ 145-6:

Է. — Յակոբ Վարդապետ, Գրիչ, 1414
-25, եղբօրողդի և աշակերտ Գրիգոր Խլա-
թեցիի: Օրինակած է.

1. — Մելին. Աւետարանին Մատքոսի,
Գր. Տաթեացիի, 1414ին. — Խաչիկեան,
Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 165:

2. — Քարոզպիրք, Գր. Տաթեացիի,
1418ին, ի վայելումն արեգերալոյս Կա-
րապետ Վարդապետի. — Յիշտ. ԺԵ. Դար-
ի, Ա., էջ 212-3:

3. — Յայմաւուրք, 1425ին. — Յիշտ.
ԺԵ. Դարի, Ա., էջ 329:

Ը. — Իզնատիս Աբեղայ, Գրիչ, 1443
-58: Խառարաստայ Վանքին մէջ օրինա-
կած է.

1. — Մատոց, 1443ին, տանուտէր
Պապի խնդրանքով. — Յիշտ. ԺԵ. Դարի,
Ա., էջ 548-9:

2. — Մելին. Կարուղիկեայց, 1454ին,
Կիրակոս Աբեղայի ցանկութեամբ. — Նո-
տարք, էջ 174:

3. — Սալմոսարան, Պատարագամատոյց,
Ժամագիրք, 1458ին, Զաքարիա Վարդա-
պետի համար. — Սիւրբէկեան, Ճուցակ
Զեռ. Եւր. Մասնաւորաց, Թ. 1:

Թ. — Մելիքիսեդ Քահանայ, Գրիչ, 1471
-3, որդի Կարապետի և Խոնդիսաթունի,
աշակերտ Իզնատիս Գրչի, օրինակած է
մասամբ,

1. — Աւետարան, 1471ին, Առնջեցի
Գրիգոր Աբեղային համար: Եկարող՝ Կա-
րապետ. — Խաչիկեան, ԺԵ. Դարի Յիշտ.,
Մասն Բ., էջ 322:

2. — Մայր Մատոց, 1473ին, Ալեք-
սան տանուտէրին համար. — Նոյն, էջ 344:

Ժ. — Մարգարէ Արդ, Արճիշեցի, 1531
-6, Խառարաստայ Վանքին մէջ օրինա-
կած է.

1. — Սալմոսարան, 1531ին. — Առկ-

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՓՈՔՐ ԿՈՐԻՒՆԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Կար ժամանակ մը երբ բանասէրները կ'ընդունէին թէ Փոքր Կորիւնը կը ներկայացնէր Կորիւն Վարդապետի հարազատ երկը, իսկ Մհծ Կորիւնը աւելի ուշ կատարուած խմբագրութիւն մըն էր⁽¹⁾: Անդրագոյն հետազոտութիւններով հաստատուցաւ թէ սխալ էր այս կարծիքը. Կորիւն Վարդապետի նախնական երկը Մհծ Կորիւնն էր, որ հետազային համառոտուած էր անձանօթ անձի մը ձեռքով, Ասրենացի Պատմութիւնէն պատուաստուած կարևոր ընդմիջարկումներով⁽²⁾:

Արդ, «³ զ էր այդ անձանօթը որ Փոքր

(1) Կորիւն, Վենետիկ, 1894, էջ 6:

(2) Նորայր Բիւղանդացի, Կորիւն Վարդապետ, Տիգիս, 1900, էջ 397:

եան, Վասար. Վանքերը, Բ. , էջ 409-410:

2. — Սալմոսարան, 1534ին, Աղթամարցի Գրիգորիս Կաթողիկոսին համար. — Հանդ. Ամս., 1915, էջ 27:

ԺԱ. — Թումայ Եղեգեցի, Մաղկող, 1573ին ծաղկած է Աստուածատուր Արեգացի օրինակած Աւետարանը. — Ե. Լալայեան, Ցուցակ Զեռ, Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 680:

ԺԲ. — Տիրատուր Արեգայ, 1578ին օրինակած է մէկ Աւետարան Տէր Գրիգորի համար. — Հանդ. Ամս., 1925, էջ 471-2:

ԺԳ. — Կարապետ Եպիսկոպոս, որդի Գիւլամիրի և Սայիպուլթանի, աշակերտ Տէր Աստուածատուր քաջ քարտուղարի, 1585ին Արծուաբեր Ա. Աստուածածնի Վանքին մէջ, նորոգած և կազմած է մէկ Աւետարան. — Ամբատեան, Գեղարքունի, էջ 48-9:

ԺԴ. — Գրիգոր Կրօնաւոր, 1613ին օրինակած է մէկ Գիրք Հարցմանց, Գր. Տաթեացիի. — Կար., Ցուցակ Զեռ. Էջմիածնի, թ. 831:

Ե. ԵՊԱ. Մովսեսին

Կորիւնի խմբագրութիւնը հրապարակ հաւած էր:

Մեր մատենագրութեան մէջ ունինք նման պարագայ մը Ասկրատ Աքուաստիկոսի Եկեղեցական Պատմութեան վերաբերմանը: Այդ զիրքն աւ մեզի հասած է երկու տարբեր ձևերով, որոնք կը յարջորջուին Մեծ Ասկրատ և Փոքր Ասկրատ⁽³⁾: Ասկէ մօտքասորդ դար առաջ, Պրօֆ. Ն. Աղոնց յօդուածով մը ուզեց հաստատել թէ զիրոյիշեալ Փոքր Ասկրատի հեղինակն էր Յակոբ Վրդ. Ուսհայեցի, վախճանած 1085 թուին⁽⁴⁾:

Այդ հաստատումը հիմնուած էր 1085 թուին Ուսհայի մէջ վախճանող Ասնահնեցի կամ Քարափնեցի Յակոբ Վարդապետի⁽⁵⁾ և Ուսհայեցի Յակոբ Վարդապետի⁽⁶⁾ նոյնացման վրայ: Միսիթար Այրիվանեցի 641 թուականին ներքեւ ունի:

«Փիլոն Տիրակացի»:

«Յակոբ Ուսհայեցի արար զնոր թարգմանութիւն»:

Աղոնց կը զրէ. «Թիւը հարկաւ ճիշդ չէ, և այս չէ կարսորը»⁽⁷⁾: «Ժամանակագիրը յայտնում է որ այս ինչ թուին Փիլոն Տիրակացին թարգմանել է Ասկրատը և յիշում ի զէպ որ Յակոբ Ուսհայեցի արել է երկրորդ թարգմանութիւնը այսինքն Փոքր Ասկրատը»⁽⁸⁾:

Աղոնցի կատարած այս նոյնացմանը ճիշդ չէ սակայն: Յակոբ Ուսհայեցին տարբեր անձ է, Յակոբ Ասնահնեցին տարբեր: Միսիթար Այրիվանեցի ճիշդ տեղը զետեղած է Ուսհայեցին ինչպէս կը հաստատուի Միսայէլ Ասորիի հետեւալ տեղիքով. Ասորւց ԶԿԶ և Հայոց Պ.Պ = 644 թիւին ներքեւ.

«Ի սոյն ժամանակու էր սուրբ Վարդապետն Յակոբ Ուսհայեցին ի գուշակէն Անտիոքայ, որ ուսաւ լեզու և զիր յունարէն և երրայեցերէն, որ զնաց և եմուտ պատ-

(3) Հրատ. Մեսրոպ Վ. Տէր Մավակսեան, 1897, Վաղարշապատ:

(4) Սիսն, 1936, էջ 300-304:

(5) Մատթէոս Ուսհայեցի, Երաւաղէմ, 1869, էջ 273:

(6) Միսիթար Այրիվանեցի, Մոսկվա, 1860, էջ 50:

(7) Սիսն, 1936, էջ 300:

(8) Սոյն, էջ 301: